

Key words: law, function, the main function, regulatory function, protective function, social function.

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԳԵՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՆԴՐՈՒՄ**

Սյուզաննա Նազինյան
*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

Սահմանադրական¹ է արդյոք պետությունը՝ այս խնդրում հիմնական դերը պատկանում է իրավունքին. իրավական կարգավորումը կոչված է պահպանել հասարակության մեջ այնպիսի իրավիճակ, որ նրանում չլինի ոչ մասնավոր, ոչ էլ պետական կամայականություն:

Իրավական և ժողովրդավարական պետությունների սահմանադրական կարգի կարևորագույն սկզբունքներից է՝ իրավունքի /իրավական օրենքի/ գերակայությունը: Իրավունքի գերակայությունն ամենից առաջ սահմանադրության և օրենքի՝ գերակայությունն է: Իրավական պետությունը սահմանադրական պետություն է: Սահմանադրական և հասարակական կարգի հիմնական սկզբունքներն ամրագրվում են երկրի բարձրագույն օրենսդրական ակտի՝ սահմանադրության մակարդակով: Ինչպես նշում է պրոֆեսոր Ն. Այվազյանը «Իրավունքի գերակայությունը, նրա տիրապետությունը հասարակության կյանքի բոլոր կողմերի վրա, անկասկած, իրավական պետության գոյության կարևորագույն պայմաններից է¹»:

Իրավական պետության ձևավորման և նրա հետագա զարգացման խնդրում վճռորոշ նշանակություն ունի սահմանադրականության գաղափարների, սկզբունքների և հայեցակարգերի իրավաբանորեն ամրագրումը հիմնական օրենքում ու դրանց իրականացման համար համապատասխան մեխանիզմների

¹Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Պատ. խմբ. Ն.Ա. Այվազյան. Եր., 2016. էջ 139:

և երաշխիքների համակարգի առկայությունը և՛ սահմանադրական նորմերում, և՛ գործող օրենքներում:

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Շարությունյանը, ընդհանրապես ինքը՝ իրավական պետությունը, գիտական հարթության վրա իրենից ներկայացնում է որոշակի տեսական հայեցակարգ և դրան համարժեք պրակտիկա:

Մայրցամաքային իրավական համակարգում «իրավական պետություն» (Rechtsstaat) եզրույթը ծագել է XIX դարում, որին ընդհանուր իրավունքի համակարգում համապատասխանում է «իրավունքի կառավարում»՝ rule of law բառակապակցությունը:

Այդ արտահայտությունների տակ երկու իրավական համակարգերում հասկացվում են, ընդհանուր առմամբ համանման իրավական մոտեցումներ, որոնք վերաբերում են օրենքի գերակայությանը, մարդու իրավունքներին, հանրային քաղաքական իշխանության կազմակերպական-իրավական ձևին՝ կառավարման ձևին, կառուցվածքին՝ գործառույթներին, քաղաքական ռեժիմին և այլն: Այս տարբեր հայեցակարգերի համար ընդհանուրն այն է, որ պետության մարմինները գործում են ըստ իրավունքի հրահանգների, որոնք, իրենց հերթին, հիմնվում են կամայականությունը սահմանափակող սկզբունքների վրա:

Ինչպես անգլիական rule of law, այնպես էլ գերմանական rechtsstaat և ֆրանսիական Etat de droit-ը ստեղծեցին սահմանադրականության կոնստիտուցիոնալիզմի՝ համակարգ:

Փաստը, սակայն կայանում է նրանում, որ սահմանադրական համակարգն անհնար է առանց իրավունքի գերակայության: Դա շատ սերտ կապ է սահմանադրական համակարգերը հնարավոր չէ անջատել իրավունքի գերակայությունից:

Իրավունքի գերակայությունն իմաստ է հաղորդում օրինաստեղծ գործունեությանը: Արդեն Տ. Լոքն էր պնդում, որ գերագույն իշխանությանը պարտադիր է ղեկավարել երկիրը հրապարակված,

Տե՛ս և Проблемы общей теории права и государства. Уч. для вузов. Под общ. ред. В.С. Нерсисянца. М., 2002. С. 64-65.

Իրավական պետության օրինակաբանության տե՛ս Соколов А.Н. Правовое государство, от идеи до ее материального воплощения. Екатеринбург, 2002.

Մանրամասն տե՛ս Ասատրյան Ա. Իրավունքի գերակայության սկզբունքը արդի իրավական համակարգի խորագույն պետությունում, 2010:

մշտական և բնակչության հայտնի օրենքների միջոցով. «Ով էլ ունենա, հետևաբար, պետության մեջ օրենսդրական կամ գերագույն իշխանությունը նա պարտ է դեկավարել ոչ թե հանկարծաստեղծ հրովարտակներով, այլ իսկական, մշտական, հայտարարված և մարդկանց հայտնի օրենքների միջոցով, պարտ է օգտվել այդ իշխանությունից անկողմնակալն արդար դատավորների օգնությամբ, որոնք պետք է լուծեն վեճն օրենքի հիման վրա, վերջապես, պարտ են իրենց երկրում օգտագործել հասարակության ուժը միայն այդ օրենքների կատարման համար, իսկ նրա սահմաններից դուրս արտաքին վնասը կանխելու, հասարակությանը հարձակումից և ներխուժումից պաշտպանելու համար»⁵:

Սահմանադրական համակարգն այս ամենին ավելացրեց իշխանությունների տարանջատման և հավասարակշռման համակարգը:

Ժողովրդավարության մեջ, Ռուսոյի մեկնաբանմամբ, օրենսդիր մարմնի, հետևապես և օրենքների ընդհանուր գերակայությունը վավերացվում է օրենսդրի և ինքնիշխան ժողովրդի կամքով: Իրավական պետականությունը յուրահատուկ կապ է ապահովում իշխանության թևերի միջև գործադիր և դատական իշխանությունները գործում են օրենսդիր իշխանության կողմից ընդունված օրենքների հիման վրա: Դա նշանակում է նաև, որ պետք է ապրել օրենքների, այլ ոչ թե մարդկանց իշխանության ներքո:

Դրան համապատասխան 1791թ. ֆրանսիական սահմանադրությունը կառուցված էր իրավական պետության սկզբունքի վրա՝ թագավորը՝ որպես պետական մարմին, իրականացնում է իր գործունեությունը ենթարկված լինելով օրենքին. «Ֆրանսիայում ոչ մի իշխանություն կանգնած չէ օրենքից բարձր: Թագավորը կառավարում է երկիրը միմիայն օրենքի ուժով և կարող է իրեն հնազանդություն պահանջել միայն օրենքի անունից» /զլ. 2, կետ 3/⁶: Իսկ օրենքին պետք է հնազանդվել Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրին համաձայն (ընդունվել է 1789թ.):

Օրենքի գերակայության պայմաններում պետության և նրա ներկայացուցիչների կամայական որոշումներն արգելված են:

⁵St' u Джон Локк. Сочинения в трех томах. Том 3. М., 1988, էջ 341:

⁶St' u Конституции и законодательные акты буржуазных государств XVII - XIX вв. Англия, США, Франция, Италия, Германия. Сбор. док. под ред. П.Н.Галанзы М., 1961:

Այնուամենայնիվ, սահմանադրական համակարգերում ընդունված պրակտիկայի համաձայն, գործադիր և դատական իշխանությունները կարող են օգտվել դիսկրեցիոն իրավասություններով, գործել ազատ հայեցողությամբ:

Գործադիր իշխանության ազատ հայեցողությունը չի նշանակում, որ օրինակ՝ ամերիկյան սահմանադրական պրակտիկայում ձևավորված չէ վարչակազմի կողմից օրինականության ապահովումը պահպանող և իր անկախության չարաշահումները կանխող որևէ համակարգ: Գործադիր իշխանության կողմից դիսկրեցիոն լիազորություններ իրականացնելու ազատությունը սահմանափակված է նախևառաջ ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ պարունակվող «պատշաճ ընթացակարգի պահանջով»:

Ինտելեկտուալ և գործնական նկատառումներից ելնելով՝ այստեղից շատ բան է փոխառել իրավունքի գերակայության ժամանակակից եվրոպական հայեցակետը: «Պատշաճ ընթացակարգը» ենթադրում է շահագրգիռ անձանց մասնակցությունը որոշումներ ընդունելու գործընթացում: Դրան համապատասխան շահագրգիռ անձանց անհրաժեշտ է հնարավորություն տալ իրենց կարծիքն արտահայտել արժանավայել պայմաններում⁸:

Իրավունքի գերակայությանը, ինչպես և սահմանադրականությունն անհրաժեշտ նախապայմաններ են իրավական և ժողովրդավարական պետություն կառուցելու համար:

Սահմանադրականությունը՝ քանզի այն ոչ միայն օգտվում է իշխանությունը սահմանափակող իրավաբանական մեթոդներից, այլև հանդիսանում է բովանդակալից արժեքների /ազատության/ կրող, կարող է խոչընդոտել ոչ իրավական օրենքների և այլ նորմատիվ - իրավական ակտերի ընդունմանը:

⁸ԱՄՆ Գերագույն դատարանը պաշտպանում է դա միայն որոշակի շահերի կապակցությամբ: Որպես օրենսդրական չափանիշ՝ «պատշաճ ընթացակարգը» հիմնված է սահմանադրության XIV ուղղման վրա: Դրան համապատասխան Նախանգեքր չեն կարող քաղաքացիների իրավունքներն ու արտոնությունները սահմանափակող օրենքներ ընդունել կամ որևէ մեկին զրկել կյանքից, ազատությունից կամ սեփականությունից առանց պատշաճ իրավական արարողակարգի /այս տերմինը լայնորեն օգտագործվել է արդեն 1791թ. V ուղղման մեջ սկզբնապես քրեական իրավունքի համատեքստում

⁸ Մանրամասն տե՛ս Крυσс В.И. Конституционализм права: основы теории. М., 2016:

Այս ամենը վկայում է, որ իրավունքի գերակայության սկզբունքը ծառայում է իրավահավասարության ապահովմանը՝ ինչպես ձևական, այնպես էլ բովանդակային առումներով:

Պետական կամքին բոլոր հարաբերություններում անհրաժեշտ է տալ իրավական ձև, այլ խոսքերով՝ իրավունքը պետք է տարածվի նաև պետական մարմինների վրա: Ավելին՝ պետական մարմինները կարող են գործել միայն օրինական իրավասությունների հիման վրա: Այսպես, ՀՀ Սահմանադրության 5 -րդ հոդվածի 2 -րդ մասում նշված է, որ «Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ»: Եվ ոչ միայն այն պատճառով, որ այդ մարմինները պարտավոր են կիրառել իրավական նորմերի պահանջները, այլև նրա համար, որ չեն կարող իրականացնել իրենց գործունեությունն առանց համապատասխան լիազորությունների: Իրավական պետության օրինականության աստիճանի մասին կարելի է դատել ըստ նրա, թե որքանով են միանշանակ պետական մարմինները գործունեությանը վերաբերող նորմերը, ինչ չափով են այդ մարմինները գործելու ըստ սեփական ազատ հայեցողության, մանավանդ, եթե այդ մարմիններն իրենց գործունեությամբ առնչվում են մարդկանց հետ: Այնուամենայնիվ, պետության իրավական բնորոշումը և կարգավորումն ինքնին դեռ չի ապահովում սահմանադրական ազատություն: Այնտեղ, որտեղ ամեն ինչ կատարվում է պետական հրահանգների համաձայն, ոչ ճկունությունը ու կանխորոշվածությունը կյանքը դարձնում են անտանելի: Չափից ավելի շատ և չափից ավելի պակաս իրավական հրահանգները հավասարապես վտանգավոր են հասարակության կայունության և անվտանգության համար:

Որպեսզի կամայականությունը և անարխիան սահմանափակող իրավունքն ու օրենքները իրագործվեն, որպեսզի իրավունքը կանխատեսել լինի, անհրաժեշտ է պահպանել ձևական բնույթի որոշակի կանոններ: Քանի որ միևնույն կենսաիրավիճակին անխուսափելիորեն կարող են վերաբերվել մի քանի իրավական նորմեր, անհրաժեշտ է ունակություն ունենալ, թե նրանցից որը պետք է կիրառվի տվյալ դեպքում: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի իրավական ակտերը ներկայացված լինեն մեկը մյուսի հանդեպ հիերարխիկ հաջորդականությամբ: Այս հարցը, մեզանում մասամբ

լուծված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով⁹:

Ժան Ժակ Ռուսոն իրավական նորմերի հիերարխիան կապում էր իրավունքի աղբյուրի հետ՝ ժողովրդի կողմից որպես կամքի արտահայտում ընդունված օրենքն իրենից ներկայացնում է օրենքի գերագույն և միաժամանակ բացառիկ աղբյուր: Օրենքի գերակայությունը դարձավ սահմանադրական պահանջ:

Իրավունքի աղբյուրների հիերարխիան, որպես կանոն, արտահայտում է պետական մարմինների հիերարխիան¹⁰: Ըստ էության, իրավական նորմերն ունեն իրենց մակարդակները, և հիերարխիայում ավելի ցածր գտնվող նորմի վերաբերյալ անհրաժեշտ է կիրառել ավելի բարձր մակարդակի նորմ: Օրենսդրությունը կարող է ազդել կամ կանխորոշել նրա գործունեությունն առաջին հերթին այն ժամանակ, երբ օրենքները գերակա են վարչական ակտերի նկատմամբ:

Իրավունքի աղբյուրների հիերարխիան այնքան կարևոր դեր է կատարում ցանկացած իրավական համակարգի կառուցվածքում:

Իրավունքի աղբյուրի հիերարխիայի գործողության սկզբունքը հավելում է իրավական չորս դրույթներով.

– նույն մակարդակի, սակայն ավելի ուշ ընդունված իրավական նորմը նախորդ նորմը դարձնում է անվավեր, այսինքն՝ իսկական է միշտ վերջին հրահանգը.

– եթե տրված են ընդհանուր և հատակ նորմեր, ապա կիրառվում է հատուկ նորմն անկախ նրա ընդունման ժամանակից,

– օրենքը չի կարող հետադարձ ուժ, հակառակ դեպքում իրավական նորմերն ընդհանրապես պարտադիր ուժ չէին ունենա /հետին թվով միշտ ամեն ինչ կարելի է կլինի փոփոխել/.

– օրենքները պետք է ունենան համընդհանուր կիրառում, այսինքն չեն կարող վերաբերել որոշակի անձի կամ գործի քաղաքացիական իրավունքներից զրկող օրենքների նախագծերի արգելում/:

Ամերիկյան Սահմանադրության հեղինակները այս սկզբունքներից մի քանիսն այնքան կարևոր են համարել, որ նույնիսկ մտցրել են այն Սահմանադրության մեջ ոչ որպես ընդգծված

⁹ Օրենքն ընդունվել է 2002 թվականի սեպտեմբերի 3-ին.

¹⁰ Մանրանյան տե. n. Петров А.А. Шафиров В.М. Предметная иерархия нормативных правовых актов. М., 2014.

հիմնական իրավունք, այլ որպես օրենսդրությանն առնչվող պարտավորություն:

Գերմանիայում արդեն 19-րդ դ. օրենքի գերակայությունը սահմանադրական սկզբունք է հանդիսանում, և պետական վարչակազմը պարտավոր էր հետևել դրան: Այս պահանջները և նրանցում ձևակերպված սկզբունքները Գերմանական հիմնական օրենքը տարածում էր նաև օրենսդրության վրա: Ճիշտ է, համաձայն ԳԴՀ-ի Հիմնական օրենքի 20 հոդ. 3-րդ պարբերության, «օրենսդրությունը կապված է սահմանադրական կարգով, գործադիր իշխանությունն ու արդարադատությունը՝ օրենքով և իրավունքով»: Այսպիսով, օրենսդիրը կապված է միայն սահմանադրական կարգով, այն ժամ, երբ իրավունքի գերակայության սկզբունքները /«օրենքի և իրավունքի» պահպանում պարտականություններ են դնում վարչակազմի /գործադիր իշխանության/ դատական մարմինների վրա, նաև, համաձայն ԳԴՀ Հիմնական օրենքի 28 հոդվածի, գերմանական հոդերի վրա: Գերմանական հիմնական օրենքում, ինչպես նաև ամերիկյան Սահմանադրության մեջ, անմիջականորեն պարունակում են իրավունքի գերակայության մի ամբողջ շարք դրույթներ: Համապատասխան դրանց ազատությունը կարող է սահմանափակել միայն օրենքով /առանձին հիմնարար իրավունքների դեպքում օրենքը պետք է համապատասխան պահանջներին և ձևով, և բովանդակությամբ/: Հիմնական իրավունքը պահանջում է՝ ինստիտուցիոնալ այն արարողակարգերը, որոնք նախատեսված են իրավունքի հետագա փոփոխությունների դեպքերի համար /այստեղից և օրենքի հետագարձ ուժի արգելքը, սակայն ոչ թե որպես հիմնարար /ֆունդամենտալ իրավունք, այլ որպես արդարադատության իրականացմանը վերաբերող հրահանգ/:

Ըստ անգլիացի իրավաբան Ա. Դայսի, օրենքի գերակայությունից բխում է հետևյալը.

– պատժել կարելի է միայն օրենքի նախնական կարգադրությունների համապատասխան: Որոշումներ կայացնելու և բռնություն կիրառելու իրավասու պետական իշխանությունները և անձինք չեն կարող բռնություն իրականացնել կամայականորեն, չեն կարող որոշումներ կայացնել միայն ըստ իրենց ազատ հայեցողության.

– իրավունքը հավասարապես կիրառվում է բոլորի հանդեպ

բոլորը հավասար են օրենքի առջև/ ինչի երաշխիք է այն փաստը, որ միևնույն տեսակի գործերը քննվում են նույն ընդհանուր դատարանի կողմից.

- պետության և պետությունը ներկայացնող անձանց հանդեպ գործում են նույն այն օրենքները, ինչ քաղաքացիների համար: Եթե պետությունը կամ նրա ծառայողը խախտում են օրենքը, ապա նրանք կրում են նույն պատասխանատվությունը, ինչ և հասարակ քաղաքացին: «Ցանկացած ծառայող, սկսած վարչապետից և վերջացրած պահակային ոստիկանով կամ հարկահավաքով, իրավական հիմք չունեցող արարքի համար կրում է նույն պատասխանատվությունը, ինչ ամեն քաղաքացի»¹¹:

Պետական մարմինների գործողությունները հարկավոր է հնարավորինս կապակցել իրավական նորմերով: Դա անպայման չէ, որ անբարենպաստ է պետական վարչակազմի համար, քանզի դրանով նա ազատվում է հետագա և անկանխատեսելի քաղաքական ու իրավաբանական պատասխանատվությունից:

Իրավական պետության բնորոշ կապվածությունը սահմանադրական/ ընդհարվում է ոչ կորպորատիվ նկրտումների հետ: Դրան համապատասխան օրենքն ազատ է արձակում վարչակազմի ձեռքերը և ապահովում է գլխավորապես մի դատարկ տարածության, որն այնուհետև կլցվի միավորումների ներկայացուցիչների հետ համաձայնագրերով ըստ կոնկրետ շահերի, օրինակ, աշխատանքի տեղավորման հարցերով համաձայնեցուցիչ խորհուրդներում կամ, ասենք, արդյունաբերության վարկավորման հարցերով՝ վարկ ստացողների հետ «խորհրդատվության» ընթացքում:

Իրավունքի գերակայության սկզբունքից ամեն դեպքում բխում է, որ օրենքը խախտող պետության գործողությունները ենթակա են դատական բողոքարկման՝ որոշումը պետք է չեղյալ համարվի, վնասը փոխհատուցվի. խախտված իրավունքներն անհրաժեշտ են վերականգնել. իսկ ոտնահարված իրավունքները՝ պաշտպանել: Այս տեսակետն էական է այն դեպքում, երբ օրենքը, նույնիսկ զարգացած սահմանադրական համակարգերում, կառավարության համար նախատեսում է արդարանալու հնարավորություն: Մեծ

¹¹St u Diez J. Introduction to the Study of the Constitution, 10th. ed., 1959 էջ 88, 193:

Բրիտանիայում մինչև այսօր գործում է «Թագավորը չի կարող սխալվել» կանխավարկածը /պրեզումպցիան/:

Ինչնիցե, առանց սահմանադրականության և իրավունքի գերակայության սկզբունքի անհնարին կլինի ժողովրդավարական կարգերի հաստատումն ու ամրապնդումը հասարակության մեջ:

Սահմանադրականության տեսակետից գործադիր իշխանության կողմից իրավաստեղծությունը հնարավոր է սահմանափակել երկու եղանակով:

1. Կարելի է պահանջել, որպեսզի գործադիր իշխանության մարմինների ցանկացած վարչական ակտ կապակցված լինի խորհրդարանի օրենսդրական ակտերին.

2. Կարելի է սահմանափակել պետական մարմինների իրենց իսկ և առավել նա երրորդ անձանց հանդեպ կարգավորման ազատությունը, մանավանդ հիմնական ազատությունների հարցերով՝ արգելելով երկրորդական կարգավորումը կամ կապելով այն միայն ուղղակի իրավասությունների հետ, իսկ բուն այդ իրավասությունները պետք է համապատասխանեն որոշակի պայմանների: Սակայն որպեսզի այդ համակարգը գործի, նույնպես անհրաժեշտ է կառավարման ակտերի որոշակիությունը: Այս պայմանի խախտման համար պետք է նախատեսված լինի կառավարության ակտերի բողոքարկման հնարավորությունը:

Սովորական դատական վերահսկողությունը կամ սահմանադրական արդարադատությունը /մասամբ նախնական/ կարող է լուծել այս խնդիրները միայն որոշակի սահմաններում:

Եվրոպական դատարանները չեն ստուգում բուն լիազորող օրենքները: Ղեկավարվելով իրավունքի գերակայության սկզբունքով՝ անգլիական դատարաններն այսօր էլ չեն արգելում անսահման իրավասություններ տվող օրենքները: Օրենքի գործողությունը չի դադարեցվում նույնիսկ այն դեպքում, երբ այն պարունակում է հրահանգներ, որոնք առանց մտածելու կարելի է արգելել որպես իրավունքի գերակայության սկզբունքին /տվյալ դեպքում՝ բնական արդարության/ հակասող՝ եթե հրահանգը ընդունված է վարչական ակտով:

Համաձայն իրավունքի գերակայության սկզբունքի, օրենքի՝ որպես օրենսդրական մարմնի գործունեության արդյունքի տակ հասկացվում է այն, որ նրա վրա հիմնված վարչական ակտերի

միջոցով կարգավորումը պետք է լինի տրամաբանական, արդար, դատական բողոքարկում թույլատրող և խտրականությանը արգելող: Այս պայմաններին չհամապատասխանելու դեպքում դատարանը կարող է անվավեր ճանաչել այդպիսի ակտերը: Բրիտանական իրավունքում, օրինակ, ենթադրվում է վարչական ակտ հրապարակող նախարարի բանականությանը: Դատարանն առանց կասկածի ընդունում է նախարարի հայտարարությունն առ այն, որ որոշում կայացնելուց առաջ նա հաշվի է առել բոլոր հանգամանքները և այլն¹²:

Իրավունքի սահմանադրական գերակայության սկզբունքները առավել նպատակահարմար է լուսաբանել Եվրոպական Միության իրավունքի կողմից ներկայացվող նվազագույն պահանջների օրինակներով: Եվրոպական դատարանի րնդիանուր իրավական սկզբունքների շարքում առկա է նաև պատշաճ իրավական և բնական արդարության պահանջը: Դրան համապատասխան իշխանությունները կարող են գործել միայն այն դեպքում, երբ նրանք լիազորված են դրա համար և կարող են հիմնավորել իրենց որոշումները: Իսկ նրանց համար, ում շահերը շոշափվում են դրա բնթացքում, պետք է ապահովված լինի իրենց կարծիքը արտահայտելու *audiatur et altera pars* թող լսված լինի և հակառակ կողմը: և իրենց պաշտպանելու հնարավորությունը:

Հավասարությունն օրենքի և դատարանի առջև, ըստ ամենայնի, հանդիսանում է օրինականության կարևորագույն տարրը, որը միաժամանակ դատավորի համար ապահովում է գործողության առավելագույն ազատություն: Հավասարությունն իրենից ներկայացնում է ժամանակակից իրավական համակարգի կառուցման յուրահատուկ պահանջ: Եթե օրենսդրությունը հավասար չհամարեր բոլոր նրանց, ում նա առնչվում է ապա իրավական հրահանգը համընդհանուր չէր լինի: Սակայն հավասարապես բոլոր հավասարներին վերաբերող համընդհանուր կարգավորման պահանջը գոտ մարդկանց իրավահավասարության սկզբունքի իրագործման ձև է մի սկզբունք, որը հանդիսանում է ժամանակակից պետականության անքակտելի բաղադրամասը:

Միևնույն ժամանակ իրավունքը համարում էր, որ մարդիկ տարբեր են և

¹²Մանրանիան Բ.Ն. Арановский К.В., Князев С.Д. Правление права и правовое государство: Исследования по теории права и государства. М. 2016:

այդ պատճառով տարբեր իրավունքներ ունեն, այնժամ, երբ ժամանակակից հասարակությունը հիմնված է մարդկանց հավասարության կանխավարկածի վրա՝ համենայն դեպս, պետության և օրենքների համար:

Այնուհանդերձ այս ամենը չի լուծում գործնական օրինականության հարցը ո՞ր շրջանակներում պետք է իրականացվի հավասարությունը: Բանն այն է, որ իրավաբանական առումով հավասարությանը նշանակում է, որ միանման, այսինքն՝ իրավական կարգավորման նպատակի տեսակետից հավասար կամ նույն գործին առնչվող անձանց հետ պետք է վերաբերվել նույն կերպ: Համաձայն այս սկզբունքի՝ պաշտպանությունը պետք է ունենա առնվազն նույնչափ իրավունքներ, որքան և մեղադրող կողմը: Իրավական նորմը կարգավորում է ներկան և ապագան: Սրանից բխում է նրա հետադարձ ուժի արգելքը, իրավունքի և այն կիրառողների անկողմնակալ ուրույնն ու համապարփակությունը: Այստեղից հետևում է նաև իրավական հուսալիության և ձեռք բերված իրավունքի ու սպասելիքների պաշտպանությունը: Հետադարձ ուժ ունեցող իրավական նորմերի կիրառելիության պարտադիր պայման պետք է հանդիսանա հետադարձ ուժի որոշակիությունը: Որպեսզի մարդիկ վստահեն իրավական համակարգին, իրավունքը պետք է հայտնի լինի: Այդ վստահության գնահատականն իրավունքն արտահայտում է ձեռք բերված իրավունքների ու սպասելիքների պաշտպանությամբ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում հանգամանորեն դիտարկվում են սահմանադրականության դերն ու նշանակությունը սահմանադրականության ձևավորմանը, իրավական պետության ձևավորման գործընթացում, ինչպես նաև դիտարկվում են իրավունքի գերակայության հաստատման խնդիրները:

Բանալի բառեր. սահմանադրականություն, սահմանադրություն, իրավական պետություն, ժողովրդավարական արժեքներ, իրավունքի գերակայություն:

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ КОНСТИТУЦИОНАЛИЗМА В ФОРМИРОВАНИИ ПРАВОВОГО ГОСУДАРСТВА И УТВЕРЖДЕНИЯ ВЕРХОВЕНСТВА ПРАВА

Сюзанна Назинян

*Сотрудник Института философии,
социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

В статье обстоятельно рассматриваются роль и значение конституционализма в формировании правового государства и проблемы утверждения верховенства права.

Ключевые слова: конституционализм, конституция, правовое государство, демократические ценности, верховенство права.

THE ROLE AND SIGNIFICANCE OF CONSTITUTIONALISM IN THE FORMATION OF LEGAL STATE AND THE RULE OF LAW

Syuzanna Nazinyan

*PhD student of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The article thoroughly discusses the role and importance of constitutionalism in the formation of legal state and the problem of the rule of law.

Key words: constitutionalism, Constitution, legale state, democratic values, the rule of law.

ՇԱՐԻԱԹԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐՔՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՍՏԱԿԱՐԳԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՆ

Կրիստինա Խանիկյան

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

Եվրոպական և ռուսական իրավական գիտությունը
մոտալրմանական իրավունքը սովորաբար դիտարկում է որպես շարիաթի